ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հնդկաստանի Հանրապետություն, Գուջարաթ նահանգ, ք. Ահմեդաբադ, 2019 թ. հունիսի 10-13

4. Հրավիրող կողմը

Հնդկաստանի Հանրապետության կառավարություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն դեղագործությանն ու առողջապահությանը նվիրված «iPHEX» 7-րդ միջազգային ցուցահանդեսին

6. Քննարկված թեմաները

Ցուցահանդեսն իր շուրջն էր համախմբել տարբեր երկրների ներկայացուցիչներ, այդ թվում ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև հայաստանյան դեղարտադրող և դեղ ներմուծող ընկերությունների ներկայացուցիչներ: Ներգրավված էր ավելի քան 10 000 տեղական այցելու: Ցուցահանդեսի ընթացքում իր արտադրանքն էր ներկայացրել Հնդկաստանի դեղարտադրության և առողջապահության ոլորտի շուրջ 500 ընկերություն:

Հնարավորություն էր ստեղծվել ոչ միայն ծանոթանալ հնդկական արտադրանքին, այլև պայմանավորվածություններ ձեռք բերել՝ հետագա համագործակցությունն ընդլայնելու համար:

Ամենամյա այս ցուցահանդեսը միջազգային հեղինակավոր հարթակ է, որը թույլ է տալիս խորացնել հայ-հնդկական հարաբերություններն առողջապահության բնագավառում, օգտագործել գործնական նոր փոխշահավետ կապեր հաստատելու հնարավորությունը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ցուցահանդեսի շրջանակներում կայացած բազմաթիվ հանդիպումներից բացի, հանդիպում եմ ունեցել Գուջարաթ նահանգի Սննդի և դեղերի վերահսկման վարչության (Food and drug administration (FDA)) տնօրենի հետ: Գուջարաթի նահանգն ունի 60 միլիոն բնակչություն և 4625 դեղարտադրող ընկերություն: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին դեղերի գրանցման առանձնահատկությունները, դեղարտադրող ընկերություններին ներկայացվող պահանջները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագայում համագործակցություն ծավալել ՀՀ ԱՆ Դեղերի փորձագիտական կենտրոնի հետ:

Միջազգային ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպվել էր նաև դեղերի շուկայում առկա կարգավորումներին նվիրված խորհրդաժողով, որին մասնակցեց ՀՀ առողջապահության նախարարության Դեղերի փորձագիտական կենտրոնի ղեկավարը: Նիստին քննարկվել են դեղերի շուկան կարգավորող իրավական կողմերը, ներկայացվել են Հնդկաստանում վերը նշված ոլորտի փոփոխությունները, դեղերի շրջանառության բնագավառում ներկայիս մարտահրավերները, խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ գործադրվող ջանքերը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առողջապահության նախարարության պատվիրակության անդամները և հայաստանյան դեղագործական ընկերությունների ներկայացուցիչները բազմաթիվ երկկողմ հանդիպումներ ունեցան հնդկական դեղարտադրող ընկերությունների, ինչպես նաև Հնդկաստան ժամանած այլ երկրների առողջապահության նախարարությունների և դեղագործական ընկերությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են հնդկական արտադրության դեղերի համապատասխանության

հարցերը, նաև ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ՝ հետաքրքրություն ներկայացնող դեղագործական ընկերությունների հետ փոխշահավետ համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

17 հունիսի 2019 թ.